ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

"6" դեկտեմբերի 2012թ № 175-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 5-Ի N 124 -Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետով, 70-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերի, 3-րդ և 5-րդ կետերի դրույթներով, որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2012 թվականի հոկտեմբերի 5-ի <<Համաճարակների պատրաստվածության մարզային ծրագիրը և վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի ու կանխարգելման հարցերով հանձնաժողովի անհատական կազմը հաստատելու մասին>> N124-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները.

1) որոշման վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ <<Համաճարակներին պատրաստվածության մարզային ծրագիրը և վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի և կանխարգելման հարցերով հանձնաժողովի անհատական կազմը և գործունեության աշխատակարգը հաստատելու մասին>>.
2) որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետից հետո լրացնել նոր՝ 3-րդ ենթակետ, հետևյալ բովանդակությամբ՝
<<3)վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի և կանխարգելման հարցերով հանձնաժողովի գործունեության աշխատակարգը՝ համաձայն N 3 հավելվածի>>.
3) որոշման N2 հավելվածում <<Արթուր Աթայան>>, <<Սերգեյ Հայրապետյան>> բառերը փոխարինել համապատասխանաբար <<Աշոտ Հայրապետյան>> <<Արշավիր Հովհաննիսյան>> բառերով, հանել <<Աիդա Բաղալյան - <<Կապանի բժշկական կենտրոն>> ՓԲԸ, բժիշկ համաճարակաբան >> բառերը:

2. ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացում:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2012թ. դեկտեմբերի 6
ք. Կապան